

Թ Ի Ի 20 Ն

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ
ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ

ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ

ՎԵՐԱԲԱՑՈՒՄ 1913-14 ՇՐՋԱՆԻ
ԵՐԵՍՓՈՆԱՆԱԿԱՆ ՎԵՐԱԿԱԶՄՈՒԹՆԵՆ ԵՏՔԸ

ՆԻՍՏ Ի.

6 ԴԵԿՏԵՄԵՐ 1913



Տպագրութիւն Տ. ՏՕՂՐԱՄԱՃԵԱՆ

Կ. ՊՈԼԻՍ, Պապր-Ալի Ճառտէսի, Թիւ 49

1914

ԿԵԿՐՈՆԱԿԱՆ ԵՐԵՍՓՈԽԱՆՔ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆՔ

(Ա. Վիճակ)

1. Տ. Եղիշէ Արքեպս. Դուրեան
2. Տ. Վահրամ » Կանկունի
3. Տ. Զարմայր քհնյ. Կեղիւրեան
- 4.

(Բ. Վիճակ)

5. Տ. Մաղաքիա Արքեպս. Օրմանեան
6. Տ. Գրիգորիս Ծ. Վ. Պալազեան
7. Տ. Երուանդ Ծ. Վ. Բերտաշեան
8. Տ. Սմբատ Ծ. Վ. Գազազեան

(Գ. Վիճակ)

9. Տ. Շմայեակ Արքեպս. Դիմաքսեան
10. Տ. Մաղաքիա Եպիսկ. Տէրունեան
11. Անանիա Վ. Հազարապետեան
12. Տ. Միքայէլ քհնյ. Աշենեան

(Դ. Վիճակ)

13. Տ. Արիստակէս Ա. Քհնյ. Զիզմէնեան
14. Տ. Խորէն » Յարութիւնեան
15. Տ. Յուսիկ » Քաջունի
16. Տ. Տաճատ » Փաշայեան

(Ե. Վիճակ)

17. Տ. Եղնիկ Ծ. Վ. Պալազեան
18. Տ. Շմայեակ Քահ. Էքսէրեան
19. Տ. Բարձր » Թագրմեան
20. Տ. Արէլ » Երէցեան

ԱՇԽԱՐՀԱԿԱՆՔ

(Ա. Վիճակ)

Էյուպ Ս. Եղիա

21. Օճիկ էֆ. Մինասեան

Խապարիւղ

22. Պետրոս Էֆենտի Հալաճեան
23. Պետրոս » Խորասանեան
- 24.

Մագրիկիւղ

25. Երուանդ Էֆենտի Պէյազեան
26. Թագուր » Արեւեան
27. Տօքթ. » Մալխասեան
28. Յակոբ » Պոյաճեան
29. Յովհաննէս » Իսապուլեան
30. Սարգիս » Պէհրէկեան
- 31.

Պէօլիւքուէրէ

32. Արշակ Էֆենտի Ալպոյաճեան
33. Յովսէփ » Գազազեան

Սան-Սթէֆանո

34. Գէորգ էֆ. Ալաճեան

Օրմազիւղ

35. Խալիկ Էֆենտի Սըվաճեան
36. Տօքթ. Ստեփան Էֆենտի Թէրզեան

(Բ. Վիճակ)

Բերա-Գասը Էփաշա

37. Աստուածատուր Էֆենտի Էաշատրեան
38. Արամ » Հալաճեան
39. Արմենակ » Բալսեղեան
40. Գէորգ » Թորգման
41. Գիգոր » Շահլաբեան
42. Յովհաննէս » Զեկիւրեան
43. Սարգիս » Մինասեան
44. Տր. Վ. » Թորգոման
45. Յովսէփ » Գարսեան

Գարմալ-Գնալը

- 46.

Գուրուէշմէ

- 47.

Պէշիկմաշ

48. Տրդատ Պէյ Տատեան

Ֆէրիկիւղ

49. Եղուարդ Էֆենտի Գարակէօղիւն
50. Հրանտ » Ասատուր
51. Մարկոս » Նաթանեան
52. Յակոբ » Պահրի

(Գ. Վիճակ)

Գատրգիւղ

53. Անտոն Էֆենտի Թալազ
54. Աղաթի » Ալաճեան
55. Եղուարդ » Շիրինեան
56. Ներոէս » Օհանեան
57. Մկրտիչ » Աբգարեան
58. Պեննէ » Թորոսեան
59. Սարգիս » Էսմէրեան

Եֆնի-Քարու

60. Պենտն Էֆենտի Տէյրմէնեան
61. Վահան » Փալազեան

Պալաճ

62. Տօքթ. Կարապետ Էֆենտի Եաղուպեան
63. Յարութիւն Էֆ. Մոստիլեան
64. Սարգիս » Սրենց
65. Հրանտ » Անդրէասեան

Սկիւտար Եֆնի-Մանյալէ

66. Թորգոմ Էֆենտի Պոյաճեան
67. Հմայեակ » Խոսրովեան
68. Վահան » Սուրենեան

Ա.Ջ.Գ.Ա.Յ.Ի.Ն. ԸՆԴՀ. ԺՈՂՈՎ

ԲԱՑՈՒՄ 1913—1914 ՆԱՏԱՇՐՁԱՆԻ

ՆԻՍՏ Ի.

6 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1913

ՆԱԽԱԳԱՀ. — ՄԲԱՋԱՆ ՊԱՏՐԻԱՐԻ ԶԱՅՐ

ԱՏԵՆԱՊԵՏ. — ՏՐ. ՏԱՂԱԿԱՐԱՆ ԷՖԵՆՏԻ

ՕՐԱԿԱՐԳ

1. — ԸՆՏՐՈՒՅԻՆ Ազգ. Ժողովոյ ներկայացուցչի յերուսաղէմ:
2. — ՔՆՆՈՒՅԻՆ իմնական նախագծի կանոնագրի երուսաղէմի Ս. Յակոբեանց վանուց. (Շարունակութիւն վիճաբանութեան):
3. — Ազգ. տուրքի կանոնագիրը եւ Համարակալութեան Դիւանի տեղեկագիրը:

ԲԱՑՈՒՄ ԺՈՂՈՎՈՅ

Նիստը տեղի ունեցաւ Ղալաթիոյ Խորհրդարանը եւ ժամը 3.30ին առեանք բացուեցաւ ի ներկայութեան 55 երեսփոխաններու որոց թիւը հասաւ յետոյ 74ի:

Ս. ՊԱՏՐԻԱՐԻ ԶԱՅՐ. — Դեր-Ատե-Նապետ էֆ. զբաղմանց պատճառով այսօր բացակայած է: Դ. առեանքէն ալ հրաժարեալ է:

Բաղան տուած է. ուստի կը խնդրուի որ առժամեայ առեանքէն մը ընտրէք:

(Ժողովը Պարզեւ էֆ. Փալազեանը առժամեայ առեանքէն ընտրեց):

ՀՐԱԺԱՐԱԿԱՆ Գ. ԱՏԵՆԱՊԵՏԻ

ԱՏԵՆ. էֆ. — Ատեանը բացուած է 57 երեսփոխաններու ներկայութեան: Սկսե-

չով առնական գործողութանց, նախ
կարգաճիւղի վրայի վրայի գործողութան
ընթացքի առնականութեան ձևերը էք. Պոլսեան
հետեւեալ հրաժարականը զրկած է:

(Առհնադայիր ԼՖ. Կարդաց հետևեալ
գիրը).

ԱՄԵՆ. Տ. Զաւէն Արքեպիսկոպոս

Պատրիարք Հայոց Թոմքիոյ

Աղգ. Ընդհ. Ժողովը խիստ մեծ պատիւ
ըրաւ ինձ, զիս Գ. Ստեփանյան ընտրելով
իրեն. յանձնուեալ շնորհակալ եմ աս հաս:

ժամանակէ մը ի վեր անհանգստութիւն մը եկած է վրաս, որ կ'արդիւն ինձ նստելու տեղ մը առանց զուրս կ'ընկու. ուստի կը խնդրեմ որ Ազգային ժողովը բարեհաճի ընդունիլ ներկայ հրաժարականս Գ. Ասենապետի պաշտօնէս:

Համադրելով Ձեր Ս. ԱՆ կը մատուցանեմ Ձեր Ամանապատուութեան խորին յարգանազս հաւատարին :

Յակոբ Ն. Պօլանեան

ԱՏԵՆ. ԻՖ. — Յայտնի է թէ գիւանը
չի կրնար պակաս անդամներ ունենալ,
ուստի անմիջապէս պէտք է օրակարգ ան-
ցընել երրորդ ասուհնապետի ընտրութիւնը
եթէ ոչ այսօր՝ գոնէ յաջորդ նստին
կատարելու համար այդ ընտրութիւնը:

ՎԱՐԴԳԻՄ ԷՖ.— Ես կը մերժեմ ընդունել երրորդ ասենապետին հրաժարականը: Քանի որ այս ժողովը ունի Ա. ասենապետ մը որ տարիներով լացողայեւ լուծ հակառակ, դարձեալ իր պաշտօնին վրայ կը պահուի իբր պատուակալ ատենապետ, այնպէս ալ կ'առաջարկեմ որ Յակոր ԷՖ. Պոյաձեանի պարզ հրաժարականը ժերմութիւն եւ պահուի իբր պատուակալ երրորդ ասենապետ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ժիշդ է որ ըստ ուրինի Ժողովը երեք աստենապետ պէտք է որ ունենայ, բայց երբ տաշէրճաճը մօտ է, եւ յառաջիկայ մայիսին նոր ընտրութիւն պիտի կատարուի, չեմ կարծեր որ հարկ ըլլայ հիմայ ընտրութիւն կատարել. ամէն մէկ աստենապետի բացակայութեան, հարկ

Հիշեց որ նորի մը ընտրութեան ձեռնարկուին
Հետեւաբար կ'առաջարկեմ քուէի դնել
այս հրաժարականը:

(Ասեւնապետ էֆ. քուէի զնկով Պո-
յաճեան էֆ.ի հրաժարականը 13ի դէմ 16
քուէով ընդունուեցաւ եւ որոշուեցաւ յա-
ջորդ նիստի օրակարգը անցնել Գ. ասեւ-
նապետի բնարտօթիւնը).

0 1 2 3 4 5 6

ԸՆՏՐՈՒԹԻՒՆ ԱԶԳ. ԺՈՂՈՂԻ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՅԶԻ ՅՆԵՐՈՒՍԱՂԵՄ

ԱՏՏԵՆ. Էֆ. — Օրինակաւն մեծամասնութիւն զոյացած ըլլալով, կ'անցնինք օրակարգի. առաջին խնդիրն է՝ ընտրութիւն Ազգ. Ժողովոյ ներկայացուցչի Երուսաղէմի վանքին մէջ: Ինչպէս զիտէք, անցեալ նստին որոշուած էր այս նստին մէջ ընտրել Ազգ. Ժողովի ներկայացուցիչը՝ կանոնադիրը գործադրութեան գրուելու համար Երուսաղէմի մէջ, ինչքա՞նչ ուղղելով, եթէ քուէարկութեան համար պատրաստ էք՝ սկսնիք, եթէ ոչ՝ հինգ վայրկեան դադար ընենք: Ի զիտութիւն ժողովիդ կը հաղորդեմ թէ մէկ երկու դիմումներ եղած են որոնք հարկ է որ հարգացուն: Ահաւասիկ անոնցմէ մէկը:

(Առեհաղպիր էֆ. Կարգաց հեռուհաղ
պիրը).

Աղհու աղուք Առնեապետ Էֆէնսի

Այդդ. Երեսփոխանական Ժողովի

Ազգ. Պատկաների Ժողովին կողմէ
վաւերացուած Երուսաղէմի նոր կանոնա-
գրին համաձայն, Ա. Յակոբայ վանքի բո-
լոր մասերուն մէջ Ժողովը իր հսկողու-
թիւնը տեղւոյն վրայ անմիջական կերպով
պիտի գործադրէ, իր կողմէն ընարուած
ներկայացուցիչ-պաշտօնեայի մը միջոցաւ :

Նկատելով որ Ազգ. Բարձր. Ժողովը այդ պառակտեալ միջնորդութիւն մէջ արժանապէս ներկայացնելու համար ստիպողական է բացարձակապէս անկողմնակալ մէկը գտնել, կը համարձակիմ իմ թեկնածութիւնս առաջարկել այն յոյսով որ պիտի գնահատուի եւ ընդունուի:

ԲԱՅՈՒՄ 1913—1914 ՆՍՏԱՇՐՁՈՆԻ

369

Դեռ երիտասարդ եմ, երեսուն երկու տարեկան, եւ հետեւաբար լեցուն՝ ազգիս ծառայելու եւ աշխատելու հռանդով:

Կեդրոնական վարժարանը թողելէ յետոյ, ինքզինքս նուիրած եմ հանրային ծառայութեան եւ ութը տարի եղած եմ խմբագիր «Մանղումէ» եւ «Հայրենիք» օրաթերթերուն մէջ : Այս պատճառաւ քաջ ուսումնասիրած եմ մեր ազգային կեանքը եւ ծանօթ եմ անոր ներքին հանգամանքներուն եւ վարչական եղանակին :

Յետոյ չորս տարի պետական ծառայութեան մէջ զտնուած եմ իբր քաղաքային վարիչ պաշտօնեայ, և այսպէսով որոշ վարձատուութիւն ձեռք բերած եմ պետական ձեռակերպութեանց, ներքին վարչական եղանակին և օրէնսդրութեանց մասին:

Այս բոլորին հետ, կը պարծենամ իրբ
բաղարձակապէս անկողնակալ, պարկեշտ
եւ ուղղամիտ մարդ, որ նոյն իսկ սաղի-
մական ամէնէն խռով եւ ոսկեշատ պայ-
քարին մէջ, կատարեալապէս անկողնակալ
մնացած է, չխորհելով բնաւ անձնական
չահուն համար յարիւ այս կամ ա՛յն կողմը
Նո՛յն ուղղամիտ եւ անկաշատ պաշտօնա-
վարութիւնը՝ պետական ծառայութեանս
մէջ ալ։ Այս բաներուն կրնան վկայել
նոյն իսկ Պատկառելի Ժողովից անդամնե-
րէն չառնը որ ճանչցած են զիս։

Հետեւաբար, Ազգ. Բարձր. Ժողովիդ
բարձր եւ անկողմնակալ ողին ճշդիւ ներ-
կառացի ող պաշտօնեայի մը ընտրութիւնը
գիւրադնելու մտօք, կը համարձակիմ ինք-
զինքս թեկնածու յայտարարել, խոռա-
նալով ըլլալ միշտ անկողմնակալ, անշա-
հախնդիր, ազգային գերագոյն շահերուն
սպասարկու եւ խղճամբտ գործադրող ազ-
գային բարձր իշխանութեանց հրամաննե-
րուն:

Ընդունեցէք, Տէր Աստուածեա, ազգային գերազոյն ժողովիդ հանդէպ իմ հաւատարմական զղացումներու և հաւատքին:

Յակոբ Տէր-Յակոբեան
ԱՏԵՆ. ԷՖ.— Հոս խնդիր մը կը ներ-
կայանայ: Մենք պիտի կրնանք նկատի
առնել այսպիսի գրեր, եւ յետոյ, Ազգային

Ժողովոյ ներկայացուցիչը ժողովէն դուրս
ալ պիտի կարենա՞նք ընտրել, թէ՛ ժողո-
վին մէջէն պիտի ընտրուինք զայն:

Ե. ԷՖ. ՇԻՐԻՆԵԱՆ. — Եւ յետոյ ներկայացուցին ամսականը ո՞րքան պիտի ըլլայ, եւ որո՞ւն կողմէ պիտի վճարուի:

ԱՏԵՆ. Էֆ. — Ընտրուելիք անձը եւ
բեպոստան պիտի ըլլայ թէ ո եւ է անձ
ալ կրնայ ընտրուիլ. ասիկա պէտք է ճշ-
դութի նախ:

ԺԱԳ. ԷՖ. ՍԱՅՍԱՊԱԼԵԱՆ. — Կանոնա-
գրին մէջ յօդուած մը կայ որուն համե-
մատ ներկայացողութիւն կրնայ երեսփոխան
չըլլալ Բայց ուրիշ պարագայ մը կայ, հոս
չենք կրնար կարգաւ ո եւ է գիր, մինչեւ
որ երեսփոխանի մը կողմէ իւրացուած
չըլլայ ան:

Յ. ԷՖ. ՇԱՀՐԻԿԵԱՆ. — Ես պիտի խընդ-
բէի որ վիճարարութիւնը այս կերպով
չարտահակուի. այս ձեռով ընտրութիւնը
կրնայ երկար տեւել տակաւին: Կը խնդրէի
որ հինգ վայրկեան զադար արուէր եւ
խորհրդակցութենէ յետոյ դայինք այստեղ
եւ ընտրութիւն կատարէինք:

(Պահ մը դադար տրուելէ յետոյ).

ԱՏՆՆ. ԷՖ — Ասեանք վերաբացուած է: Երևութիւններու մասնակի խորհրդակցութիւններէն այն եզրակացութեան կարելի եղաւ յանգիլ որ, Երուսաղէմի յանձնաժողովին պաշտօն յանձնուի որպէս զինախապէս բանակցութիւն կատարէ ընտրելի նկատուած անձերու հետ, եւ յառաջիկայ նստին ընտրելիներու ցանկ մը բերէ, եւ ըստ այնմ քուէարկութիւն կատարուի, որով կրնանք այսօր յետաձգել խնդիրը եւ անցնիլ օրակարգի երկրորդ խնդրին:

Հ ԷՖ. ԱՍՍՏՈՒՐ. — Խնդիրը յետա-
ձգուած չլլար այս կերպով. ընդհան-
րապէս ժողովը այս գործը պիտի յանձնէ
Երուսաղէմի Յանձնաժողովին որ իր բա-
նակցութիւնները կատարելէ ետքը, երկու
երեք անուններ բերէ և ժողովը ատոնց
վրայէն պիտի կատարէ ընտրութիւնը:

Ա. Է. Ֆ. ՀԱՆԱԾԵԱՆ. — (Ընդմիջելով).
Այն պայմանով որ ժողովը ինքը կատարէ
ընտրութիւնը:

Հ. Է. Ֆ. ԱՍՍՏՈՒՐ. — (Շարունակելով).
Անշուշտ, թեկնածուներ պատրաստելու եւ
անոնց հետ բանակցելու գործն է որ կը
յանձնուի Յանձնաժողովին, որ յաջորդ
նստին իսկ պիտի բերէ այդ թեկնածուներ
ընտրութիւնը:

Յ. Է. Ֆ. ՊԱՆՈՒՐ. — Ի՞նչ առաջ խնդիր
եղաւ թէ ներկայացուցիչը երեսփոխան-
ներէն թէ դուրսէն պէտք է ընտրել:
Պէտք է այս մասին որոշում մը տալ, եւ
յետոյ կը մնայ ընտրութիւնը. ո՞վ պիտի
կատարէ զայն: Երկու դադարիս կայ,
ոմանք կ'ուզեն որ Յանձնաժողովին մի-
ջոցաւ թեկնածուներ որոշուին եւ հոս
բերուին անոնց անունները. ոմանք ալ
կ'ըսեն թէ վարչութեան պէտք է յանձ-
նել այս ընտրութեան գործը:

ԱՍՏԵՆ. Է. Ֆ. — Ձեր կարծիքը ի՞նչ է:

Յ. Է. Ֆ. ՊԱՆՈՒՐ. — Ես կ'ըսեմ թէ վար-
չութեան պէտք է յանձնել ընտրութեան
գործը:

ՄԱՐԿՈՍ Է. Ֆ. ՆԱԹԱՆԵԱՆ. — Այն յայ-
տարարութեան վրայ թէ դուրսէն ալ կա-
րելի է ներկայացուցիչ ընտրել, մտադրու-
թիւն ունիմ առաջարկ մը րնել, կարծելով
թէ ասով թարգմանը եղած կ'ըլլամ Ազգ.
Ժողովին: Բանի որ այս խնդրոյն համարմի-
քաւենք շատ եղան Ազգ. Ժողովի մասին,
եւ սա կ'առաջարկեմ. — Որպէս զի Ազգ.
Ժողովը ցոյց տայ թէ ինք յետին-միաբեր
չունի Երուսաղէմի խնդրին մէջ, պէտք է
յայտարարէ թէ ինքը ձեռնդակ կը մնայ...

ԶԱՅՆԵՐ. — Ասանկ բան չի կրնար ըլ-
լալ...

Մ. Է. Ֆ. ՆԱԹԱՆԵԱՆ. — (Շարունակ-
ելով). Ազգ. Ժողովը կ'ըսէ թէ նպատակ
ունի այնտեղի ապականութիւնները մաք-
րել. արդ, եթէ ներկայացուցիչը մենէ ըլ-
լայ, այն ատեն աշխարհիս բոլոր Հայերը
պիտի ըսեն թէ Ժողովը Երուսաղէմի խն-

դիրը արծարծեց եւ այնպէս մը ըրաւ որ
իւր մէջէն մէկը պաշտօնի կոչէ:

ԱՍՏԵՆ. Է. Ֆ. — Ձեմ ներքեր որ Ս. զգ. Ժո-
ղովին այսպիսի նպատակ մը վերագրուի:

ՄԱՐԿՈՍ Է. Ֆ. ՆԱԹԱՆԵԱՆ. — Կը պա-
հանջեմ որ այս առաջարկս քուէի դրուի,
այսինքն թէ դուրսէն պէտք է որ ընտ-
րուի ներկայացուցիչը:

Ս. ՆԱԹԱՆԵԱՆ. — Կը տեսնեմ որ խն-
դիրը շատ կ'երկարի: Կարծեմ Երուսաղէմի
խնդիրը երկար առեմն է ի վեր սեղանին
վրայ կը դնուի եւ քար գայթակղութեան
եղած է: Կ'ապահովեմ թէ ազգը ձանձ-
րացած է այլ եւս ատկէ, եւ երախտա-
պարտ պիտի ըլլայ եթէ ան վերնայ սե-
ղանին վրայէն: Բայց ես Ժողովիդ ուշա-
գրութիւնը կը հրաւիրեմ կէտի մը վրայ:
Ինծի պարտաւորութիւն տուիք որ Հա-
յաստանէն անցնիմ եւ ես անցնելով՝ հայ
Ժողովուրդին ցաւերը բերի իմ հետս: Եթէ
Պոլիս գտնուէի պարտականութիւնս ա՛յն-
քան ծանր պիտի չըլլար, բայց քանի որ
Հայաստանէն անցայ եւ այնտեղի ժողո-
վուրդը մեծ յոյսեր դրած է իմ վրայ, պի-
տի հարցնէ թէ պատրիարքը ի՞նչ ըրաւ:
Ես փառքի եւ ցոյցի համար չպատեցայ
Հայաստանի մէջ, այլ Ժողովուրդին ցա-
ւերը տեսայ եւ անոնց կողմէ իմ վրայ
դրուած պարտականութիւնը ստանձնեցի:
Եւ սակայն կարգ մը պայմաններ կան ու-
րոնք ցորչափ չլրացուին, ես բան մը չպի-
տի կարենամ րնել: Պիւտճէի խնդիրը կայ
Պատրիարքարանի վերակազմութիւնը կայ:
Առանց այս խնդիրներու կարգադրութեան
իմ ջանքերս ապարդիւն կը մնան: Այս կազ-
մով կարելի չէ դործ տեսնել, եւ ես պա-
տասխանատու պիտի մնամ այն Ժողովուր-
դին առջեւ որուն մէջէն անցայ եւ որուն
ցաւերը բերի: Պիտի խնդրէի որ այսօր-
ուան խնդիրը շուտով քուէի դրուէր, եւ
Ժողովը անցնէր ուրիշ աւելի կարեւոր
խնդիրներու: Այլապէս շատ շուտով պիտի
յուսահատիմ, եւ այն օրը որ յուսահատիմ,
շատ շուտով պատրաստ պիտի ըլլամ գործէ
քաշուելու:

ԱՍՏԵՆ. Է. Ֆ. — Տակաւին եօթ հոգի խօսք
ուղած են: Եթէ կ'ուզէք՝ վիճարանու-
թիւնները փակուած համարինք եւ երկու
առաջարկները քուէի դնենք: Ատենցմէ մէկը
այն է որ դործը Երուսաղէմի յանձնաժո-
ղովին յանձնենք, հրաւիրելով որ ընտրելի-
ներու ցանկ մը բերէ: Միւսը՝ ներկայա-
ցուցի ընտրութիւնը յանձնել վարչութեան:

Մ. Է. Ֆ. ՆԱԹԱՆԵԱՆ. — Ես կը պահան-
ջեմ որ իմ առաջարկս ալ քուէի դրուի:

ԱՍՏԵՆ. Է. Ֆ. — Նախանհան էֆ. ի առա-
ջարկն ալ քուէի կը դնեմ:

Մ. Է. Ֆ. ՀԱՅԿԱԶՆ. — Երկրորդօր չկայ
զայն, չենք կրնար ընդունել:

ԱՍՏԵՆ. Է. Ֆ. — Նախանհան էֆ. ի առա-
ջարկը երկրորդօր կ'այ:

ԶԱՅՆԵՐ. — Ո՛չ:

ԱՍՏԵՆ. Է. Ֆ. — Ուրեմն մերժուած է, հի-
մայ, անոնք որ կ'ընդունին թեկնածուներ
նշանակելու գործը Յանձնաժողովին զԵՐ-
կել, թող ձեռք բարձրացնեն եւ անոնք որ
կ'ընդունին ընտրութիւնը վարչութեան
յանձնել, թող հաճին տալ իրենց քուէն:

(Ժողովը 2ի գէմ՝ մեծամասնութեամբ
կ'որոշէ յանձնաժողովին յանձնել):

ԱՍՏԵՆ. Է. Ֆ. — Պիտի անցնինք օրակար-
գի երկրորդ խնդրին, այն է՝ Երուսաղէմի
կանոնադրին քննութիւնը: 13րդ յօդուա-
ծէն պիտի սկսի ընթերցումը:

(Կարդացուեցաւ 13րդ յօդուածը):

Յօդ. 13. — Եկեղեցական պաշտամունքի
կամ պարտականութեան վերաբերեալ
պարզ բողոքներու համար Պատրիարքը իբր
պետ Միաբանութեան, իրաւունք ունի իր
անձնական քննութեան եւ խղճի համոզ-
մունքին համաձայն յանդիմանութիւններ
ուղղելու կամ կարգապահական պատիժ-
ներ անօրինելու:

Եթէ բողոքներուն առարկան բարոյա-
կան գայթակղութիւն պատճառող հանդա-
մանք ունի եւ կամ զեղծումի ու ըմբոս-
տացումի կարգին վերաբերի, այս կարգի

բողոքներն ու ամբաստանութիւնները, որու
ալ ներկայացուած ըլլան, Պատրիարքին
միջոցաւ Տնօրէն Խորհուրդին յղուելէ եւ
Տնօրէն Խորհուրդի կողմէ նախնական
քննութիւնը կատարուելէ վերջ անոր
քննութեան ամփոփումն ու կարծիքը բո-
վանդակող տեղեկագրով մը կը յանձնուի
Միաբանական Ընդհ. Ժողովին, որու ի-
րաւասութեան կը պատկանի դատել եւ
վճիռ տալ:

Եթէ այս կարգի բողոք ու ամբաստա-
նութիւն Տնօրէն Խորհուրդին որ եւ է մէկ
անդամին դէմ ըլլայ, Պատրիարքի միջոցաւ
խնդիրը ուղղակի Միաբանական Ընդհ.
Ժողովին կը յանձնուի:

Մ. Է. Ֆ. ՀԱՅԿԱԶՆ. — Պզտիկ դիտողու-
թիւն մը, պէտք է աւելցուի որ Պատրիարքն
է գործադրիչը վճիռներու:

ԱՍՏԵՆ. Է. Ֆ. — 13րդ յօդուածը ընդուն-
ուած է նոյնութեամբ:

(Կարդացուեցաւ 14րդ յօդուածը):

Յօդ. 14. — Միաբանական Ընդհ. Ժո-
ղովի կողմէ տրուելիք բոլոր պատժական
որոշումները կը տեղեկագրուին Ազգ. Կեդր.
վարչութեան որ զանոնք վերաքննելու
իրաւունք ունի:

ԴԱԻԻԹ Է. Ֆ. ՏԷՐ-ՄՈՎՍԷՍԵԱՆ. —
Ծրագրին մէջի այս յօդուածին տրուելիք
բառը տրուած պիտի ըլլայ:

ԱՍՏԵՆԱՊԵՏ Է. Ֆ. — Ուրեմն 14րդ յօդ-
ուածն ալ ընդունուած է:

(Կարդացուեցաւ 15րդ յօդուածը):

Յօդ. 15. — Երուսաղէմի Պատրիարքին
կամ Տեղապահին դէմ ամբաստանութիւն,
Ազգ. Սահմանադրութեան 19րդ եւ 6րդ
յօդուածներուն համաձայն Կ. Պոլսոյ Պատ-
րիարքին դէմ եղած ամբաստանութեանց
մասին սահմանուած պայմաններու եւ ձե-
ւերու հետեւողութեամբ, Ազգ. Կեդր.
վարչութեան միջոցաւ կը ներկայացուի
Ազգ. Երեսփ. Ընդհ. Ժողովին:

Պատրիարքին կամ Տեղապահին դէմ
ամբաստանութեան իրաւունք ունին Միա-
բանական Ընդհ. Ժողովը, Տնօրէն Խոր-

հուրդը, Տնտեսական մարմինը, Երեսի. Ժողովի Ընդհ. ներկայացուցիչը և Ազգ. Կեդր. Վարչութիւնը:

ԱՏԵՆ. ԷՖ. — 15րդ յօդուածն ալ վաւերացուած է:

(Կարգացուեցաւ 16րդ յօդուածը):

Յօդ. 16. — Արտաքսումի դատաւարաւորաւորէն զատ որ և է միաբան եթէ առողջական և այլ բանաւոր պատճառներով Միաբանութենէ հրաժարիլ ուզէ, պարտաւոր է պատճառաբանել հրաժարողի ներկայացնել Պատրիարքին որ կը յղէ զայն Միաբանական Ընդհ. Ժողովին:

ԱՏԵՆ. ԷՖ. — Ընդունուած է 16րդ յօդուածն ալ:

(Կարգացուեցաւ 17րդ յօդուածը):

Յօդ. 17. — Միաբանութեան ամէն մէկ անդամ Վարչութեան մէջ իրեն յանձնուած պաշտօնէն կամ պարտականութենէն դուրս չի կրնար տարբեր պաշտօն և պարտականութիւն ստանձնել, հակառակ շարժող միաբանը, իբր անկարգապահ, ներքին կանոնադրով կանխատեսուած պատժին կ'ենն թարկուի և եթէ հարկ է կը հրաժարեցուցուի:

Եթէ Ազգ. Կեդր. Վարչութիւնը հարկ տեսնէ, Երեսագէտի Պատրիարքին հաւանութիւնով, կրնայ որ և է միաբանի վանքէն դուրս Ազգ. պաշտօն մը յանձնել: Այդ պաշտօնին լրանալէն յետոյ միաբանը պարտաւոր է վանք վերադառնալ:

ԱՏԵՆ. ԷՖ. — Ընդունուած:

(Կարգացուեցաւ 18րդ յօդուածը):

Յօդ. 18. — Միաբանական Ընդհ. Ժողովը կը կազմուի Միաբանութեան բոլոր անդամներէն:

ԳՐԻԳՈՐ ԷՖ. ՇԱՀԱՍԿԱՆ. — Պէտք է ըսել բոլոր անդամները:

ԱՏԵՆ. ԷՖ. — Միաբանութիւնը կը կազմուի արդէն բոլոր անդամներէն:

ՕՍԶՆԻՐ — Բոլորը թող զբաղուին:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ուրեմն ընդունուած է 18րդ յօդուածն ալ:

(Կարգացուեցաւ 19րդ յօդուածը):

Յօդ. 19. — Միաբանական Ընդհ. Ժողովը ունի իր զիւանը բաղկացած Ա. և Բ. Ատենապետներէ և Ա. և Բ. Ատենադպիրներէ: Դիւանի անդամներուն պաշտօնը մէկ տարի կը տեւէ և յաջորդ տարիին համադրելով իրենց չեն:

ԱՏԵՆ. ԷՖ. — Ընդունուած:

(Կարգացուեցաւ 20րդ յօդուածը):

Յօդ. 20. — Միաբանութեան Ընդհ. Ժողովին նիստերն ու որոշումները վաւերական ըլլալու համար միաբաններու ընդհանուր թիւին առնուազն կէսէն մէկ աւելին ինչպէս նաեւ Ազգ. Ընդհ. Ժողովին ներկայացուցիչին ներկայութիւնն անհրաժեշտ է:

ԺԱԳ. ԷՖ. ՍՍՅԱՊԱԼԵԱՆ. — Մոռացում կայ հոն: Ընդհանուր ներկայացուցիչն ներկայութիւնը անհրաժեշտ է:

ՍՄԲԱՏ ԲԻԻՐԱՏ ԷՖ. — Այդ ներկայացուցիչը քուէ պիտի տայ:

ՉԱՅՆԵՐ. — Ո՛չ:

Գ. ԷՖ. ՇԱՀԱՍԿԱՆ. — Միաբանութենէն անոնք որ վանքն են, պէտք է նիստերուն ներկայ գտնուին, ո՛վ որ բանաւոր պատճառ ունի՝ չի կրնար գտնուիլ բնականաբար, յստուկ յիշատակութեան պէտք կայ:

ԺԱԳ. ԷՖ. ՍՍՅԱՊԱԼԵԱՆ. — Որովհետեւ կէսէն աւելին դուրսն են Ատենապետները թիւին համար է:

ՎԱՐԴԳԷՍ ԷՖ. — Կրնայ ըլլալ որ ներկայացուցիչը Պոլիս կանչուած ըլլայ:

ԱՏԵՆ. ԷՖ. — Ուրեմն 20րդ յօդուածն ալ կ'ընդունուի «ստանդ բանաւոր պատճառ» աւելցնելու պայմանով:

Յ. ՇԱՀԱՍԿԱՆ ԷՖ. — Բանաւոր պատճառներ ևւայն և թէ աւելցնէք՝ այդ օրէնքը:

բէնքին նպատակը կը ջնջուի: Ո՞վ պիտի գնահատէ պատճառին բանաւոր հանդամանքը: Օրէնքին մէջ այսպիսի բաներ չեն գրեւ: Սահմանադրութեան մէջ նախագահը կը նախագահէ Ժողովներուն ըսուած է, բայց չկայ արամադրութիւն մը՝ որ բանաւոր պատճառ բացատրութիւնը տայ:

ՏԲԹ. ՓԱՇԱՅԵԱՆ ԷՖ. — Այդ բանաւոր պատճառը կրնայ վաւերական ըլլալ: Օրինակի համար հիւանդութեան պարագան: Եւ կ'առաջարկեմ ուրեմն որ վաւերական բառը հաշտեցուցութիւն արուելիք բացատրութեան հետ:

Յ. ԷՖ. ՇԱՀԱՍԿԱՆ. — Չենք կրնար գնել այնպիսի բացատրութիւններ՝ որոնցմէ զգուշութիւններ կրնան ծագիլ ապագային: Կարելի չըլլար պատճառին վաւերականութիւնը կամ բանաւորութիւնը ճշգրտել:

ՏՕԲԹ. ՓԱՇԱՅԵԱՆ ԷՖ. — Այն ատեն եւ կ'առաջարկեմ վերջին պարբերութիւնը զատել միւսէն և ըսել՝ Ազգային Ժողովին ներկայացուցիչն ներկայութիւնը անհրաժեշտ է:

ՅԱԿՈԲ ԷՖ. ՊԱՀՐԻ. — Պէտք է որ այդ բացատրութիւնը հոն գրուի, անգամ մը եթէ հիւանդ չէ, բացակայ չէ՝ պէտք է որ ներկայ գտնուի:

Յ. ՇԱՀԱՍԿԱՆ ԷՖ. — Հարցը որոշումները գործադրելուն մէջ է. օրէնքի նպատակը գործադրութեան մէջ է: Միաբան մը աւել զգուշութեամբ, մեծիւ, հրաժարել, կարող է հիւանդանալ, մեծիւ, հրաժարել, ինչ ալ ըլլայ՝ մինչեւ որ Ազգ. Ժողովին կողմէ իրենց բան մը չհաղորդուի, ո՛չ մէկ որոշում չեն կրնար գործադրել:

ՅԱԿՈԲ ԷՖ. ՊԱՀՐԻ (ընդմիջելով). — Բայց Ազգ. Ժողովին ներկայացուցիչը կրնայ ամբաստանուիլ:

Յ. ԷՖ. ՇԱՀԱՍԿԱՆ (չարունակելով). — Ամբաստանութիւնը տարբեր բան է: Եթէ Ժողովը ընդունի ամբաստանութիւնը, գործէ կը քաշէ զայն, եւ անոր տեղ ուրիշ մը կը կարգուի. բայց օրէնքին ոգին ատով չխախտուի: Միայն թէ՛ քանի որ ներկայացուցիչը հակակշիռ գործադրելու համար կարգուած է, անոր ներկայութիւնը անհրաժեշտ է Ժողովներուն մէջ:

ԳԱԻԹ ԷՖ. ՏԵՐ-ՄՈՎՍԷՍԵԱՆ. — Ընդդէմ յայտնակէտով գրուած է այդ յօդուածը:

ԱՏԵՆ. ԷՖ. — Յօդուածը նոյնութեամբ քուէի կը դնեմ: Ընդունուած է մեծամասնութեամբ:

(Ատենադպիր ԷՖ. կարգաց կանոնադրին 21էն մինչեւ 23րդ յօդուածը և ընդունուեցաւ նոյնութեամբ):

Յօդ. 21. — Միաբանական Ընդհ. Ժողովի Երաքանչիւր անդամ իր պաշտօնավարութեան, ինչպէս նաեւ Տնօրէն Խորհուրդի անդամները, Տնօրէն Խորհուրդի վերաբերեալ խնդիրներու մասին քուէ տալու իրաւունք չունին:

Յօդ. 22. — Ամբաստանութեանց և ընտրութեանց վերաբերեալ բոլոր քուէարկութիւնները գաղտնի կը կատարուին:

Յօդ. 23. — Ազգ. Երեսի, Ընդհ. Ժողովոյ ներկայացուցիչը՝ իր հակողի և հակակշողի հանդամանքով, խորհրդակցական մասնակցութիւն ունի Ժողովին մէջ, բայց քուէ չունի:

ԳԱԻԹ ԷՖ. ՏԵՐ-ՄՈՎՍԷՍԵԱՆ. — Ազգ. Ժողովին ներկայացուցիչը կը մասնակցի խորհրդակցութեանց, բայց ձայն չունի:

ԱՏԵՆ. ԷՖ. — Ձայն ունի, բայց քուէի իրաւունք չունի: Այս ալ ընդունուած է:

(Յետոյ կարգադրուեցաւ 24էն մինչեւ 26րդ յօդուածները):

Յօդ. 24. — Միաբանական Ընդհ. Ժողովը կ'ընտրէ Տնօրէն Խորհուրդը որ եօթը անդամներէ կը բաղկանայ: Տնօրէն Խորհուրդի անդամները չեն կրնար Ընդհ. Ժողովի զիւանին անդամակցիլ:

Յօդ. 25. — Միաբանական Ընդհ. Ժողովը վանքի ընդհանուր շահերուն վերաբերող

առաջարկներ կրնայ ներկայացնել Տնտեսական Մարմնին կամ Պոլսոյ Խնամակալութեան:

Յօդ. 26.—Տնտեսական եւ խառն մարմինները ուղղակի Ազգ. Կեդր. Վարչութեան ենթակայ եւ անոր պատասխանատու կամ համարատու են: Սակայն, Միաբանական Ընդհ. Ժողովն ալ, Վանքին շահերը վտանգուած տեսած պարագային, իրաւունք ունի տնտեսական եւ խառն մարմիններէն բացառութիւն պահանջելու, եւ ի հարկին պատճառաբանեալ տեղեկագրով բոլորը ներկայացնելու Ազգ. Կեդր. Վարչութեան:

Ա. ԲԱՐՍԵՂԵԱՆ ԷՖ.—16րդ յօդուածին մէջ խօսուած է միաբանութենէ արտաքսման կամ հրաժարման մասին, մինչդեռ անոնց տեղ ընդունուելիքներու նկատմամբ ու եւ է արամադրութիւն չենք տեսներ:

Ժ. ԷՖ. ՍԱՅՍՊԱԼԵԱՆ.—2րդ յօդուածին մէջ կան անոնք, նախապէս քուէարկուած է արդէն:

ԱՏԵՆ. ԷՖ.—Ընդունուած է այս ալ:

(Յետոյ առեւտրային էֆ կարգաց 27 եւ 28րդ յօդուածները):

Յօդ. 27.—Տնօրէն Խորհուրդը կրկազմուի եօթը Տեսուչներէ, որոնցմէ հետեւեալ ճը՝

1. Լուսարարական
2. Թարգման
3. Ուսումնապետ
4. Թանգարանապետ
5. Տպարանապետ
6. Դարպասնկալ

Միաբանական Ընդհ. Ժողովին կողմէ կ'ընտրուին գաղտնի քուէով եւ իրենց յատուկ պաշտօններով, իսկ եօթներորդը որ է Պատր. Փոխանորդը, կ'անուանուի Ս. Պատրիարքին կողմէ:

Յօդ. 28.—Տնօրէն Խորհուրդի պաշտօնավարութեան չրջանը չրեք տարի է եւ անդամները վերընտրելի են:

ԱՏԵՆ.—Կ'առաջարկենք Տնօրէն Ժողովի պաշտօնավարութեան տեւողութիւնը չորսէն զեղչել երեք տարի:

ԱՏԵՆ. ԷՖ.—Անոնք որ երեք տարի կ'ուզեն, ձեռք թող բարձրացնեն:

(Մեծամասնութեամբ որոշուեցաւ ծրագրին մէջ գրուած 4 տարին Յի զեղչել):

(Կարգացուեցաւ 29րդէն մինչեւ 38րդ յօդուածները եւ մինչեւ 37 վաւերացաւ նոյնութեամբ):

Յօդ. 29.—Տնօրէն Խորհուրդը կ'ընտրէ վանքին կանոնագրով որոշուած բոլոր կրօնական պաշտօնէութիւնը: Տնօրէն Խորհուրդի իւրաքանչիւր անդամ պատասխանատու է իր ճիւղին համար կարգուած պաշտօնականներուն գործառնութեանց: Տնօրէն Խորհուրդը իր իրաւասութեան յատուկ խնդիրները ուղղակի կը կարգադրէ, եւ Միաբանական Ընդհ. Ժողովի տնօրինութեան կարօտ խնդիրները կը տեղեկադրէ նոյն ժողովին:

Յօդ. 30.—Տնօրէն Խորհուրդը իրաւունք չունի իր կրօնավարական իրաւասութեան պատկանող խնդիրներէն դուրս անտեսական, ելմտական եւ ուսումնական խնդիրներու միջամտելով կարգադրութիւններ ընելու, ինքնուրոյն որոշումներ աւելու:

Յօդ. 31.—Տնօրէն Խորհուրդի անդամներէն իւրաքանչիւրը իր տեսչութեան յատուկ խնդիրներու համար անհատապէս իսկ Տնօրէն Խորհուրդի գործունէութեան համար հաւաքաբար պատասխանատու են Ս. Պատրիարքին եւ Միաբանական Ընդհ. Ժողովին, որոնք իրենց կարգին պատասխանատու են Ազգ. Կեդր. Իշխանութեան:

Յօդ. 33.—Տնտեսական Մարմնի անդամները իրենց ճիւղին յատուկ ձեռնհասութեամբ օժտուած հմուտ անձներէ կը բաղկանան, որոնք վանքի ելմտացոյցին մէջ նշանակեալ թոշակներով վճարուած պաշտօնեաներ են: Ասոնց իւրաքանչիւրը իր ճիւղին վերաբերեալ խնդրոց համար անհատապէս եւ մատակարարական-ելմտա-

կան-հաշուական ամբողջ տնտեսական խնդրոց եւ գործառնութեանց համար հաւաքաբար պատասխանատու են Խնամակալութեան:

Յօդ. 34.—Տնտեսական մարմինը իր տրամադրութեան տակ անհրաժեշտ պաշտօնեաներ ունենալէ զատ, ունի նաեւ գանձապահ մը՝ որուն անուանումը կ'ենթարկուի Խնամակալութեան վաւերացումին եւ որ Խնամակալութեան կողմէ որոշուած զրամական երաշխաւորութիւնը պարտաւոր է աւելու:

Յօդ. 35.—Գանձապահը պարտաւոր է իր գանձումները կատարել կալուածապետի ու համարակալի կողմէ ստորագրուած հրամանագրով եւ յատուկ ստացագրերով: Գանձապահը չի կրնար ու եւ է գումար վճարել՝ ստանց մատակարարի եւ հաշուաւորի կողմէ ստորագրուած հրամանագրի:

Յօդ. 37.—Տնտեսական մարմինը իր պաշտօնը կը կատարէ սոյն կանոնագրով եւ ներքին կանոններով սահմանուած կարգերու համաձայն եւ ամէն տարի պատրաստուած եւ վաւերացուած ելմտացոյցին ճշգրիտ հետեւողութեամբ եւ գործադրութեամբ:

Յօդ. 38.—Տնտեսական մարմինը չի կրնար ելմտացոյցին սահմաններէն դուրս ծախք, նորոգութիւն եւ կալուածական գնում կատարել կամ որ եւ է մէկու մը փոխառութիւն ընել: Ասոնց Կեդր. Վարչութեան նշան ժողովի բացառիկ արտօնութեան որ հիմնուած պիտի ըլլայ Խնամակալութեան ստացարկին վրայ բացարձակապէս արդիւնած է կալուած կամ ու եւ է սեփականութիւն ծախել եւ փոխառութիւն կնքել:

ՄԻՋՐԴԱՏ ԷՖ. ՀԱՅԿԱԶԵ.—Կէտ մը վայ հոս Խառն Ժողովին պիտի գրուի եւ

արտօնութիւն ուղուի. ըստ Սահմանագրութեան, Տնտեսական Խորհուրդին ալ պէտք է զրկուի: Արդ, իրաւունք պիտի ունենայ Տնտեսականին ալ գրելու:

Յ. ԷՖ. ՇԱՀՐԻԿԵԱՆ.—Ամէն անգամ որ Վարչութեան կը գրուի, բնական է որ Վարչութիւնը ուղղակի Տնտեսականին պիտի հաղորդէ: Ասիկա Վարչութեան կատարելիք գործն է:

(Կարգացուեցաւ յետոյ 40րդ յօդուածը որ ամփոփում ընդունուեցաւ):

Յօդ. 40.—Վանքի կալուածներէն մաս մը եթէ առանց վարձքի կարօտ ազգայիններու բնակութեան յատկացնել պէտք ըլլայ, հարկ է որ նախապէս յատուկ վաւերագրերով հաստատուի թէ ստուգիլ նպատակաւորութիւնը ազգայինը անօգնական, կարօտ, որք կամ որբեայրի, ծեր ու աշխատութեան անկարող, վերջապէս նիւթական միջոցներէ զուրկ է: Այս պարագային ալ, վճարող վարձակալներու նման, հարկ է պաշտօնական օրինակով վարձակալութեան պայմանագրութիւններ կնքելու: Բացարձակապէս արդիւնած է առանց պայմանագրութիւն կնքելու որ եւ է կալուած. ձրի ըլլայ թէ փոխարինութիւնով վարձակալութեան աւել:

Տնտեսական մարմինը եթէ հարկ տեսնէ կարօտեալներու անուղի համար օժանդակութիւն ընել, օժանդակութիւնը ամսական գրամական վճարումը պիտի վերածուի այս կարգի նպաստներու համար ելմտացոյցով կանխատեսուած գումարի սահմանին մէջ:

(Ատեանը վաւերացաւ ժամը 5ին):

Ատեանագլխի Ատեանապետ
Հ. Արամեանց Տր. Ն. Տալաւարեան

